գեցութիւնն ունի այս ակտի վրա նաև հայի ռոմանտիզմը — անսահման հաւատը դէպի իր դատի արդարութիւնը և այդ հաւատով մղած կռիւը:

Մի քանի տարի առաջ մենք մեն-մենակ կուի դուրս եկանք մեր դաբաւոր թշնամու դէմ թափելով մեր վերջին արիւնը և պարպելով վերջին փամփուշտը ու ապրեցինք մինչև այն օրը, երբ Հայաստանի կառավարութիւնը յայտարարեց մայիս 28-ի ակտը առանց տերիտորիայի ու առանց պետութեանց վաւերացումն ունենալու. այդ մեր վճռականութիւնն է, որ առում է՝ պէտք է լինի Հայաստանը, պէտք է ամբողջանայ նա: 1917 թ. յունիս 4-ին ստորագրուեց մի դաշնագիր Տաճկաստանի հետ Բաթումում, ի՞նչ է դա, ծա՞ղր է, ճակատագրի խա՞ղ է. ո՛չ և ո՛չ, դա ճանաչումն է մեր ուժի, Տաճկաստանը այն ժամանակ զգաց, թէ ում հետ գործ ունի, նա այսօր ևս հարկադրուած կը լինի զգալ այդ:

Մեր նորագոյն պատմութեան երրորդ շրջանը յայտնի է ամենքիդ. քայլ առ քայլ կազմակերպելով, այսօր Հայաստանի մէկ մասը ճանաչեց փաստօրէն, կը նշանակէ նա օժտուած է պետութեան իրաւունքներով և կարող է միջազգային յարաբերութիւնների մէջ մտնել միւս պետութիւնների հետ: Մեր յամառ աշխատանքով և արդար իրաւունքով տէր կը դառնանք նաև Տաճկահայաստանին, որի հարցը ըստ էութեան երբեք չի կարող կասկածի տակ առնուել: Մենք պահանջում ենք այդ և մեր վճռականութիւնը իր նպատակին կը հասնի: Տաճկահայաստանի հարցը մեծապէս կապուած է Տաճկաստանի հետ, ինչպէս յայտնի է, ամենամօտ ապագայում քննութեան պիտի առնուի այդ խնդիրը, որի հետ մէկտեղ կը լուծուի նաև միւսը: Սակայն, մեր կողմից ամէն միջոց գործ պիտի դրուի, որ արագանայ լուծումը, այնպէս, որ մեր ժողովուրդը ապրիլ ամսին հնարաւորութիւն ունենայ երկիր դնալու, մշակելու հողը և վերաշինելու քանդուած տները: Միւս կողմից, Տաճկահայաստանի հարցը քաղաքական բնոյթ ունի և կապուած է ժողովրդի ապահովութեան հետ: Հայաստանը հայկական հանրապետութիւն չէ, այնտեղ ապրում են բազմաթիւ այլացեղ ժողովուրդներ, որոնք հաւասարիմ լինելով պէտք է իրենց դան ապատ, որպէս մէկ հայրենիքի հարազատ զաւակներ, և կառավարութիւնը, ինչպէս միշտ, սրանից յետոյ էլ տանելու է իր անշեղ դիծը հաշտութեան և համերաշխ քաղաքականութեան ի բարօրութիւն բոլոր ժողովուրդների. ուրախ եմ յայտնելու, որ նա յաջողութիւն է գտնում իր գործունէութեան ընթացքում: Հայաստանի յոյներն ու քիւրդերը ամէն կերպ արտայայտում են իրենց հաւատարմութեան զգացումները և ձգտում ունեն միշտ հաշտ ապրել այս հանրապետութեան մէջ: Անցեալը թունաւորուած է եղել, ապագան կը լինի լուսաւոր և հարազատ ամենքի համար: Ես բախտաւոր եմ այստեղ յայտնելու, որ Հայաստանի անկախութեան լուրը բուռն օգևորութիւն է առաջ բերել մեր զօրքի մէջ, որը բազմաթիւ հեռագիրներով խոստանում է իրեն վերջին արիւնով պաշտպանել հայրենիքը:

(Ադմկալից ծափահարութիւններ, խանդավառ ցոյցեր զօր. Սիլիկեանին): Կառավարութիւնը որոշել է առանձին ակտով իր շնորհակալութիւնը յայտնել մեր քաջարի բանակին: Շնորհաւորանքներ են ստացել նաև Հայաստանի այլացեղ կազմակերպութիւններից՝ Կարսի մահմեդական ազգային խորհրդից, յունական, ասորական ազգ. խորհուրդներից (բուռն ծափեր):

Հեռագիրներով շնորհաւորել են մեզ մեր մեծ դաշնակիցների ներկայացուցիչները և հարևան պետութիւններից Վրաստանի կառավարութեան նախագահը (ծափեր): Պէտք է ասեմ նաև, որ կառավարութեան համար այս գործում չկան կուսակցութիւններ, քանի որ ուրախութիւնը համաժողովրդական է, ամենքն այսօր պիտի ցնծան ու կոչեն միաբերան՝ կեցցէ անկախ Հայաստանը: